

Բայց Սվաճեանի այդ ազգայնական խորքը
ամենէն աւելի պայծառ, զօրեղ ու թելադրա-
կան ձեւով մ'երեւան կուգայ երկու գրուածք-
ներու մէջ զորոնք «Մեղու»ի առաջին տարին
իսկ հրատարակած է եւ որոնց մին «Հայաստ-
անի Մայր»-ի քերթուածի պէս բան մըն է, եւ
միւսը, «Պանդուխտի Մահիճ»-ի լիպակ մը :

ԱՐՇԱԿ ՉՕՊԱՆԱՆ

(Եստուանկէն)

ԷՅՄԷՐ ԽԱՅԵՄՄԻ ՔՈՌԵԱԿՆԵՐԸ

ՀԵ

Գինի կը խմեմ ես ինչպէս ամէն մարդ որ ինծի պէս ճանաչող է .
Իմ գինի խմելու Անոր համար թեթեւ բան է .
Իմ գինի խմելու Աստուած սկիզբէն գիտէր ,
Եթէ գինի չխմեմ Աստուծոյ գիտութիւնը անգիտութիւն կ'ըլլայ :

ՀԶ

Թոյլ մի՛ տար որ հոգը քեզ գրաւէ
Ու զուր վիշտը կեանքդ լեցընէ .
Մի՛ լծաներ գիրքն ու սիրուհին շուրթը ու մարդին շուրթը՝
Դեռ հոգը քեզ չգրաւած :

ՀԷ

Դինի խմէ՛ որ քենէ փարատէ բազմատեսակ հիւանդութիւններ
Ու եօթանասուներկու ազգերու մտածմունքը փարատէ .
Մի՛ պահք բռնէր այդ դեղէն ջիւանկէ
Մէկ ուսուց եթէ խմես՝ հազար ցաւդ կը փարատէ :

ՀԸ

Թէպէտ գինին հարած է բայց, թէ ս'վ կը խմէ,
Եւ յետոյ՝ Խօնչափ, եւ դարձեալ որի՞ հետ կը խմէ:
Ամէն առեւտրային երեք պայմաններն ուղիղ ըլլան՝ ըսէ՛,
Ո՛վ գինի չխմեր : քանի որ խմատուն մարդը կը խմէ :

ՀԸ

Դինի խմչ՝ զի ժարմինդ հողին ներքեւ հիւլէ կ'ըլլայ,
 Գու փոշիդ անկէ ետքը բաժակ ու բմպանակ կ'ըլլայ:
 Անխոյժ հղիւր դժոխքին եւ դրախտին,
 Խեղացին այդպիսի բաներու վրայ ինչո՞ւ խաբուի:

ՀԹ

Ժաւանակ է որ աշխարհս զեփիւռներով զարդարուի,
 Ու անծրեւի հեղմունքէն աչքերը բանայ:
 Մովսէսի ձեռքը ճիւղին վրայ փրփուրի պէս կ'երեւայ:
 Յիսուսի շունչը հողէն վեր կուգայ:

Ձ

Ամէն մէկ ումպը զոր Սաբին հողին վրայ կը ցանէ
 Տոչորած աչքի մը մէջ կսկիծի կրակ մը կը մարէ:
 Բարձրեա՛լդ Աստուած, զու գինին շնորհեցիր՝
 Զուր մը որ հարիւր ցաւէ սիրտը կ'ազատէ:

ՁԱ

Ամէն առաւօտ որ կռկռչի գէմքը ցողը կը կրէ,
 Մանուշակին ծայրերը արօտին մէջ վար կը հակին:
 Ճշմարի՛տ, ինծի վտոգի կոկոնն անուշ կուգայ
 Զի ա՛ն իր փէշերը շուրջն ամփոփած կը կրէ:

ՁԲ

Ընկերներ՝ ր. երբ միաբան մէկտեղ հաւաքուիք,
 Պէտք է որ բարեկամիդ յիշէք սրտանց,
 Երբ անուշահամ գինին խմէք միասին
 Ու կարգն ինծի գայ՝ գլխի վայր ըրէք (բաժակը):

ՁԳ

Ընկերներ, երբ միաբան տան մ'ընէք,
 Աւ զուարճանաք իրարու գեղով:
 Երբ Սաքին մոգական գինին ձեռքը բռնէ,
 Մէկ թշուառ այսինչը աղօթքներնուդ մէջ յիշեցէք:
 ԷՕՄԷՐ ԽԱՅԵԱՄ

Թարգմ. Կարսկ.
 Գ. ՓԱՌՆԱԿ